

Մինչև 50.000 դոլարի սեփական մեկնարկային բիզնեսը ստեղծելու ցանկություն ունեցող երիտասարդ ձեռներեցների համար

Մասնակցե՛ք ՄԻԿ արքելերացիայի նոր փուլին և ստացե՛ք Ձեր առաջին ֆինանսավորումը մինչև 50.000\$

Դիմելու ժամկետը երկարաձգվել է

Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը հայտարարում է իր արքելերացիոն ծրագրի նոր փուլի մեկնարկը: Թեժ աշուն է սպասվում իրենց գաղափարները կյանքի կոչելու և **սեփական սթարթափը** ստեղծելու ցանկություն ունեցող երիտասարդ ձեռներեցների համար:

Նոր արքելերացիոն շրջանին մասնակցելու հայտ կարող են ներկայացնել ինչպես թիմեր, այնպես էլ նորաստեղծ ընկերություններ: Առաջին անգամ Հայաստանում արքելերացիայի ծրագրում ներգրավվելու հնարավորություն կստանան **ոչ միայն հայկական** թիմեր/ընկերություններ, այլև մասնակիցներ մեր տարածաշրջանից և ողջ աշխարհից:

Ինչ է սպասվում ձեզանից

- Հավաքել համախոհների և միևնույն գաղափարին նվիրված պրոֆեսիոնալների թիմ
- Գրանցվել ՄԻԿ արքելերացիայի շրջանին մինչև դեկտեմբերի 1-ը՝ լրացնելով մի քանի պարզ սլայդ [այստեղ](#) և ուղարկելով mic@mic.am էլ. փոստին:
- Մասնակցել [Hackathon\[YAN\] Start 2013](#) 24-ժամյա մրցույթին և ներկայացնել Ձեր գաղափարի/նախագծի նախատիպը իրական ներդրողներից կազմված ժյուրիին:
- Ընտրվել և դառնալ ՄԻԿ-ի կողմից աջակցվող սթարթափ: Խորհրդատուների հետ միասին զարգացնել, հղկել և կատարելագործել Ձեր նախագիծը՝ պարբերական հանդիպումների, բրեյնսթորմերի, քննարկումների միջոցով:

Ի՞նչ է տալիս նոր կարգավիճակը նորաստեղծ ընկերությանը/թիմին

Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը և Մայքրոսոֆթ Արեւ-ը առաջարկում են աջակցության մի քանի մոդելներ, որոնք հաջողությամբ գործում են աշխարհի լավագույն արքելերատորներում: Այժմ Ձեր սթարթափի գրասենյակը կգտնվի Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնում, դուք հնարավորություն կունենաք օգտվել Կենտրոնի բոլոր ռեսուրսներից, տեխնոլոգիաներից, սարքավորումներից, ծառայություններից, մասնակցել բոլոր միջոցառումներին, դասընթացներին անվճար և տեղում ստանալ բիզնես/ տեխնոլոգիական խորհրդատվություն: Կենտրոնի թիմի և հրավիրված գործարար մենթորների մշտական հսկողությամբ Ձեր գաղափարը կվերաճվի պատրաստի պրոդուկտի/լուծման ընդամենը մի քանի ամսում:

6-9 ամիս անց...

Ինկուբացիոն 6-9 ամսյա շրջանի ավարտին ՄԻԿ-ի աջակցությամբ հնարավորություն կունենաք ստանալ մինչև 50.000\$ ֆինանսավորում/ներդրում հայկական կամ արտասահմանյան ֆինանսավորման աղբյուրներից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԿ Աքսելերացիայի ծրագրին դիմելու ժամկետը **երկարաձգվել է:**

Գրանցումը բաց է մինչև **դեկտեմբերի 1-ը:**

Հարցերի կամ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել **Արմինա Մխիթարյանին** armina.mkhitaryan@mic.am էլ. հասցեով և (37410) 545 343 հեռախոսահամարով: